
ՀԱՄԻՂՅԱՆ ԶԱՐԴԵՐԻ ԵՎ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ
ԱՐՏԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԿԵՐՊԱՐԿԵՍՏՈՒՄ
(1894 – 1923 թթ.)

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

XIX դարավերջին և հասկապես XX դարի առաջին երկու տասնամյակներին հայ ժողովուրդը մեծ ողբերգություն ապրեց ու հսկայական կորուստներ կրեց: 1894–1896 թթ. համիդյան ջարդերին հետևեցին երիտթուրքերի ծրագրած և իրագործած հայերի զանգվածային կոտորածները: Դա նոր շրջանի պատմության մեջ աննախադեպ կանխամտածված ցեղասպանություն էր, մի ամբողջ ազգի ֆիզիկական բնաջնջման և մշակութային ոչնչացման առաջին փորձը: Այդ արյունոտ իրադարձությունները խորապես ցնցեցին ինչպես ժամանակակիցներին, այնպես էլ Եդեռնից փրկված հայ ժողովրդի հաջորդ սերունդներին, արտացոլվեցին ոչ միայն պաշտոնական փաստաթղթերում, մամուլում, վավերագրական տեսանյութերում, ցեղասպանությունը վերապրած մարդկանց հուշերում, այլև գեղարվեստական գրականության մեջ ու արվեստում, այդ թվում՝ կերպարվեստում: Տասնամյակների ընթացքում Հայաստանում և Միջուրքում բնակվող նկարիչներից ու արձանագործներից շատերը հայերի կոտորածներին ու գաղթին վերաբերող հարյուրավոր կտավներ, գծանկարներ, հաստոցային քանդակներ ու հուշակոթողներ են կերտել, որոնցում արտահայտել են իրենց ցավն ու ցասումը, ներկայացրել բողոքն ու պահանջը՝ միաժամանակ քարոզելով մարդասիրական վեհ գաղափարներ:

Հասկանալի է, որ գիտական մեկ հողվածի շրջանակներում անհնար է վերականգնել ու բնութագրել հայ կերպարվեստում մեզ հետաքրքրող թեմայի արտացոլման ամբողջական, լիարժեք պատկերը: Ուստի մեր առջև ավելի համեստ խնդիր ենք դրել՝ բավարարվելով համիդյան ջարդերի ու Հայոց ցեղասպանության տարիներին՝ 1894-ից 1923 թվականներն ընկած ժամանակահատվածում, հայ արվեստագետների ստեղծած աշխատանքներով, առավել ևս, որ դրանցից շատերը ոչ միայն գեղարվեստական բարձրարժեք գործեր են, այլև փաստացի վկայություններ, որոնք հենված են հեղինակների անմիջական հիշողությունների ու սպավորությունների, ականատեսների՝ հայ գաղթականների ու փախստականների հետ նրանց ունեցած զրույցների, իրադարձությունների

րի թարմ հետքերով ստացված լրատվական ստույգ տեղեկությունների և լուսանկարների վրա:

1890-ականների կեսերին Արևմտյան Հայաստանում, Կոստանդնուպոլսում և Օսմանյան կայսրության հայաշատ այլ քաղաքներում տեղի ունեցած հայերի կոտորածների, հայկական հոգևոր կենտրոնների ու մշակութային օջախների ավերման, հրդեհման և սրբապղծման զարհուրելի երևույթներին արձագանքած առաջին հայ արվեստագետներից էին աշխարհահռչակ ծովանկարիչ

Հովհաննես Այվազովսկին (1817–1900) և ազգային պատմանկարչության հիմնադիր Վարդգես Սուրենյանցը (1860–1921):




Հովհաննես Այվազովսկի. Խաղաղ գիշեր: Հայերին նետում են ծովը (1897)

Այվազովսկուն նվիրված մասնագիտական գրականության մեջ բազմիցս է հիշատակվել, որ 1896 թ. օգոստոսին Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը ծովանկարչին նամակ է հղել, ուր, տեղեկացնելով նրան հայկական ջարդերի մասին, նկարչին հորդորել է այդ բռնություններն արտացոլող ու դատապարտող մի կտավ վրձնել¹: Մեպտեմբերի 8-ի հետադարձ նամակում Այվազովսկին պատասխանել է. «Վեհափառ տեր, խորին ցավով վշտացած է սիրտս անբախտ հայոց ջլաված, չտեսնված կոտորածով: Ձեր վեհափառությունը այդ-

¹ Տե՛ս, օրինակ, Մ. Ս ա թ գ ս յ ա ն. Մեծ ծովանկարչի կյանքը, Երևան, 1990, էջ 386:

տեղ, մենք այստեղ և ամենքն իրենց տեղերում կուլանք և կողքանք մեր թշվառ, կորստյան մատնված հայոց վրա և կխնդրենք աստվածային գթություն...»²: Դառնալով կաթողիկոսի առաջարկությանը՝ Այվազովսկին շարունակել է. «Ձեր օծությունը շատ զգայուն և գեղեցիկ առաջարկություն կանեք ինձ նկարել կարմիր գույնով հայոց կոտորածի պատկեր, արյան դաշտեր և լեռներ և վշտահար հայոց Հայրիկին ավերակաց վրա: Եթե Տերը կհաճի ինձ դեռևս կյանք պարգևել,



Վարդգես Սուրենյանց. Ոսոնահարված սրբություն (1895)

կգա օր, որ կկատարեմ այդ սրտաշարժ առաջարկությունը...»³: Այվազովսկուն այդպես էլ չի վիճակվել իրականացնել Խրիմյանի պատվերը: Համենայն դեպս, մեզ չի հասել ծովանկարչի նման բովանդակությամբ ստորագրած որևէ նկար: Բայց փոխարենը նա կյանքի վերջում համիդյան ջարդերին վերաբերող մի շարք յուղաներկ կտավներ ու գրչանկարներ է ստեղծել, որոնցից մի քանիսը պահպանվել են, իսկ մյուսները հայտնի են լուսանկարներով: Իր հոգեկան ապրումները նկարիչն արտահայտել է «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թվականին» մեծադիր կտավում (1896, տեղն անհայտ է), ինչպես նաև մեկ տարի անց՝ 1897-ին, ավարտված «Գիշեր: Ողբերգություն Մարմարա ծովում» (Բեյրութ, Հայկական դպրոց), «Խաղաղ գիշեր: Հայերին նե-

տում են ծովը» (Մոսկվա, մասնավոր հավաքածու)⁴, «Նավերի բեռնումը» և «Թուրքերը հայերին խորտակում են Մարմարա ծովում» յուղաներկ աշխատանքներում: Վերջին երկու ստեղծագործությունների գծանկար էսքիզները զետեղվել են հրապարակախոս, գրական և հասարակական գործիչ Գրիգոր Ջանջյանի նախաձեռնությամբ նույն թվականին Մոսկվայում լույս տեսած «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» մեծահատոր ժողովածուի

² Նույն տեղում, էջ 387:

³ Նույն տեղում:

⁴ Վերոհիշյալ երկու կտավների գունավոր պատկերները զետեղված են արվեստարան Շահեն Խաչատրյանի կազմած և առաջաբանած պատկերագրքում (տե՛ս Յավի գույնը, Երևան, 2010, էջ 29 և 31):

էջերում⁵, որի գեղարվեստական ձևավորման և պատկերագրության աշխատանքներին մասնակցել են նկարիչներ Վարդգես Սուրենյանցը, Գրիգոր Գաբրիելյանը (1862–1898) և Պոլ Ասատուրը (Պողոս Տեր-Ասատրյանց, 1866–1916): Հատորում գետեղված՝ Հովհ. Այվազովսկու կենսագրական համառոտ, անստորագիր ակնարկից տեղեկանում ենք, որ այդ գծանկարները ծովանկարիչը կատարել է խմբագրության պատվերով և Մոսկվա ուղարկել Նիսից (Ֆրանսիա)⁶:

Հովհ. Այվազովսկու հետ միաժամանակ, ինչպես ասվեց, սուլթանական Թուրքիայում ծավալված հայերի ջարդերին է անդրադարձել Վ. Սուրենյանցը: Այդ աշխատանքներից մեզ են հասել «Լքյալը» («Անտերը», 1894), «Ոսնահարված սրբություն» (1895), «Ջարդից հետո» («Կույսերի կոտորածը», 1899) և «Անարգվածը» («Երկրպագություն», 1899) յուղաներկ պաստառները, որոնց շարքին է դասվում ևս մի նկար՝ 1894-ին ավարտված «Եկայք առ իս ամենայն վաստակեալք...» փոքրադիր տեմպերան: Հայաստանի ազգային պատկերասրահում այսօր գտնվող այդ աշխատանքը, ինչպես և Այվազովսկու վերը նշված գծանկարները, արտատպվել է Ջանշյանի կազմած նույն ժողովածուում⁷:

Գաղտնիք չէ, որ Օսմանյան կայսրությունում հայերի բռնի տեղահանության ու զանգվածային կոտորածների հետ մեկտեղ թուրքերը ոչնչացրել են հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային ժառանգության վկայությունները՝ ավերել, թալանել են տաճարներն ու վանքերը, պատառոտել ու այրել մանրանկարչության բարձրարվեստ օրինակներով զարդարված ձեռագիր մատյանները, դեկորատիվ և կիրառական արվեստների թանկարժեք նմուշները... Հենց այդ մասին են սրտի կսկիծով ու խոր զայրույթով պատմում Վ. Սուրենյանցի նշված կտավները, որոնցից բացի հայտնի են նկարչի ևս մի քանի կորած աշխատանքներ, այդ թվում՝ «Հառաչանք առ երկինս» («Աղերսանք առ երկինք») և «1896 թվականը» խոշոր նկարները: Արվեստաբան Վ. Հարությունյանը դրանցից առաջինը ենթադրաբար նույնացնում է նկարչի «Եկայք առ իս ամենայն վաստակեալք...» վերոհիշյալ տեմպերայի հետ՝ համարելով այն վերջինիս «մեծադիր տարբերակը (կամ կրկնությունը)», իսկ «1896 թվականը» ներկայացնում որպես առանձին ստեղծագործություն⁸: Ժամանակին թերթելով XIX դարավերջի և XX դարասկզբի հայկական մամուլի էջերը, մենք այդ հարցի շուրջ նոր վկայություններ գտանք: Նկատի ունենք 1901 թ. մայիսի 2-ին Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» թերթում նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի կրտսեր եղբոր՝ Պետերբուրգում կրթված կենսաբան, գինեգործ Սարգիս Բաշինջաղյանի՝ Բաքվից ուղարկած

⁵ Տե՛ս Братская помощь пострадавшим в Турции армянам (Литературно-научный сборник). М., 1897, с. 74–75, 80–81 (второй отдел).

⁶ Նույն տեղում, էջ 500 (առաջին բաժին):

⁷ Նույն տեղում, էջ III (առաջին բաժին):

⁸ Տե՛ս Վ. Հ ա ռ ո թ յ ու ն յ ա ն. Վարդգես Սուրենյանց, Երևան, 1960, էջ 42–43 և 75:

բաց նամակը⁹ և ավելի վաղ՝ 1897 թ. փետրվարի 9-ին, կրկին Թիֆլիսում հրատարակվող «Արձագանք» թերթին Մոսկվայից հղված՝ Վ. Մուրենյանցի «Հառաչանք առ երկինս» կտավը նկարագրող, սակայն նկարչի կենսագիրների աչքից վրիպած թղթակցությունը¹⁰, որի հեղինակը, ինչպես պարզվեց, Հարություն Չմշկյանն էր, ով տարիներ անց՝ 1919-ին, պետք է ստանձներ Հայաստանի Առաջին Հանրապետության արդարադատության նախարարի պաշտոնը:

Ս. Բաշինջադյանը նամակը գրել է 1901 թ. ապրիլի 19-ին Բաքվի Հասարակական ժողովարանի դահլիճներից մեկում Վ. Մուրենյանցի անհատական առաջին և իր կենդանության օրոք միակ ցուցահանդեսի առիթով: Եր մենագրության մեջ անդրադառնալով այդ նամակին՝ Վ. Հարությունյանն արժևորում է այն հանգամանքը, որ թղթակցության մեջ «ծանոթ գործերի կողքին հանդիպում ենք այնպիսի վերնագրերի, որոնք մեզ դեռևս մնում են անհայտ»¹¹: Թվարկելով «անհայտ մնացած» այդ նկարները, նա առաջին հերթին հիշատակում է «1896 թվականը» վերտառությամբ յուղանկարը ու փակագծերում նշում. «ըստ երևույթին, սա նկարչի ամենամեծ կտավն էր, ուր ավերված գյուղի ֆոնին պատկերված էր կոտորածից ազատված գյուղացիների մի խումբ»¹²: Մինչդեռ Բաշինջադյանի նամակում նույն կտավի մասին ավելի մանրամասն և ստույգ տեղեկություններ կան: Օրինակ՝ ասվում է, որ կտավի վրա «նկարիչն, ինչպես երևում է, շատ աշխատանք է գործ դրել», որ կոտորածից ազատված գյուղացիները ներկայացված են «ընդհանուր աղոթքի ժամանակ», և որ նկարի առաջին պլանում պատկերված է «ճամփեզրին ընկած աղջկա դիակ»¹³:

Ինչ վերաբերում է Հ. Չմշկյանի հոդվածին, ապա դրա առաջին իսկ պարբերության մեջ մի շարք հետաքրքիր տեղեկություններ կան: Ահա, թե ինչ է գրում հեղինակը. «Մեր նկարիչ Վարդգես Մուրենյանցը աշխատում է մի նոր պատկերի վրա, որ տաճկահայերի կյանքից է: Այդ պատկերը արդեն համարյա ավարտված է, ահագին մեծություն ունի և հավանական է, որ անունը «Հառաչանք առ երկինս» դրվի»¹⁴: Անցնելով նկարի բովանդակությանը՝ հոդվածագիրը հետևյալ նկարագրությունն է տալիս. «Տխուր, սիրտ մաշող աշնանային օր է... խոնավ ցուրտը թափանցում է ամբողջ մարմինը: Դուք զգում եք հողմի շոգը, որին ձայնակցում է մարդկանց ցավագին աղաղակը... Բայց ո՞վ են այդ մարդիկ և ու՞ր են գնում, ինչու՞ նրանց մեջ այդքան վիրավորներ ու հիվանդներ կան:

⁹ Տե՛ս Ս. Բաշինջադյանի նամակ Բաքվից. «Մշակ» (Թիֆլիս), 1901, մայիսի 2, - 93, էջ 2:

¹⁰ Հ. Չ. [Հ. Չմշկյանի]. Նկարիչ Վարդգես Մուրենյանի նոր պատկերը. «Արձագանք» (Թիֆլիս), 1897, փետրվարի 9 (21), -16, էջ 3:

¹¹ Վ. Հարությունյանի նշվ. աշխ., էջ 75:

¹² Նույն տեղում:

¹³ Ս. Բաշինջադյանի նամակ Բաքվից, էջ 2:

¹⁴ Հ. Չ. [Հ. Չմշկյանի]. նշվ. հոդվ., էջ 3:

Նրանք փախչում են դժոխքից, իրենց դահիճների ձեռքից... Բայց ճանապարհին՝ տեսնելով անմեղ մանկանց, սրբապղծված քույրերի, կանանց, զինագուրկ եղբայրների անթաղ դիակները, հուսահատ կանգ են առնում ու սրտառուչ գոչում, դեպի երկինքը հառաչում ծնկաչոք...»¹⁵:

Ակնհայտ է, որ Ս. Բաշինջադյանի և Հ. Չմշկյանի նկարագրած կտավների միջև բավական ընդհանրություններ կան: Մենք գրեթե համոզված ենք, որ չորս տարվա տարբերությամբ գրված նրանց հոդվածներում խոսվում է Վ. Սուրենյանցի վրձնած, բայց տարբեր վերնագրեր կրող միևնույն կտավի մասին: Այդ կարծիքն առավել հանգամանորեն ներկայացրել ու հիմնավորել ենք նկարչի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտաժողովում¹⁶:

1915-ին Սուրենյանցը եկել է Էջմիածին, շուրջ կես տարի մնացել այնտեղ, տեսել Եղեռնից փրկված վանեցի գաղթականների թշվառ վիճակը, հիացել նրանց ազգային տարազներով: Էջմիածնում նրա կատարած գծանկարները, գուաշներն ու տեմպերաները 1916-ի աշնանը ցուցադրվել են Պետրոգրադում: Մոսկվայում հրատարակվող «Армянский вестник» («Հայկական բանբեր») շաբաթական հանդեսում այդ մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Կարա-Դարվիշը¹⁷: Հանդեսի նույն և հետևյալ համարներում վերատպված են Սուրենյանցի «Հերթ կանգնած փախստականները» և «Մի խումբ հայ փախստականներ» մատիտանկարները¹⁸: Վերոհիշյալ գործերի մեծ մասը ցուցահանդեսից գնել ու Պետրոգրադի հայությանն է նվիրել բաքվեցի խոշոր նավթարդյունաբերող, ծնունդով շուշեցի Առաքել Ծատուրյանը¹⁹: Սուրենյանցի գրաֆիկական աշխատանքների շարքում առանձնանում է 1915-ին կատարված «Պետրոգրադը՝ հայերին» հայրենաշունչ պլակատը:

«Армянский вестник» պատկերազարդ շաբաթահանդեսի համարներից մեկի շապիկի վրա վերատպվել է մոսկվայաբնակ գեղանկարիչ Կարապետ Բեդրոսովի (Պետրոսյանց, 1866–1938) «Հայուհու երազը» այլաբանական պատկերը՝ Օսմանյան կայսրությունը պայմանանշող կիսալուսինը ճանկերում սեղմած, այն կտցահարող երկգլխանի արծվի՝ Ռուսաստանի խորհրդանիշով, հեռվում երևացող Արարատի գագաթներով, հայկական հինավուրց տաճարով և հուշաքարով²⁰:

Արևմտյան Հայաստանում թուրքական ծանր լծի տակ տառապող հայրենա-

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Տե՛ս Ա. Աղ ա ս յ ա ն. Վարդգես Սուրենյանցի մի անհայտ կտավի մասին. – Վարդգես Սուրենյանց – 150: Հորեյանական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2011, էջ 77–83:


¹⁷ Տե՛ս К а р а - Д а р в и ш. Вардгес Суренянц. – «Армянский вестник» (М.), 1916, ¹ 20, с. 23–24.

¹⁸ Տե՛ս «Армянский вестник», 1916, ¹ 20, с. 11, ¹ 21, շապիկի վրա:

¹⁹ Տե՛ս Этюды художника Суреньяна. – «Армянский вестник», 1917, ¹ 1, с. 21.

²⁰ Տե՛ս «Армянский вестник», 1916, ¹ 48.

կիցների ճակատագիրը խորապես հուզել է հայկական բնանկարի հիմնադիր Գևորգ Բաշինջադյանին (1857–1925): Հայոց եղեռնին արձագանքող նրա թեմատիկ պատկերներից են «Փախստականների ճանապարհը» (1915), «Արևմտյան Հայաստանում» (1915), «Հրդեհ հայկական գյուղում» (1919) և «Հայ ժողովրդի փախուստն Էրզրումից» (1920) կտավները: Ներքին տագնապով, լարված գույների անհանգիստ խաղով է բնութագրվում Բաշինջադյանի «Մայրամուտ. Անի» անթվակիր յուղանկարը:



Փանոս Թերլեմեզյան. Մայրո ղիակների մեջ որոնում է որդուն (անթվակիր)

Ոչ միայն Եղեռնի սարսափները, այլև թուրք հրոսակների դեմ հայերի անձնուրաց պայքարն է արտացոլվել պատանի հասակից ազգային-ազատագրական շարժմանը նվիրված, օսմանյան իշխանությունների կողմից հետապնդված ու հեռակա կարգով մահապատժի դատապարտված Վանի հերոսամարտի ղեկավարներից մեկի՝ Փանոս Թերլեմեզյանի (1865–1941) արվեստում: Համիոյան ջարդերին ու Հայոց ցեղասպանությանը վերաբերող նրա կտավներից են «Գաղթականը» (1901), «Պատերազմի արհավիրքները» (1916 և 1929), «Հայ գաղթականները ողբում են իրենց հայրենիքը» (անթվակիր), «Մայրը ղիակների մեջ որոնում է որդուն» (անթվակիր) յուղաներկ աշխատանքները²¹: Հայաստանի ազգային պատկերասրահում պահվող այդ ստեղծագործությունները


հիմնականում լուծված են կարմրադարչնագույն մռայլ գույներով և մղձավանջային ճնշող տպավորություն են թողնում: Թերլեմեզյանի՝ Հայոց ցեղասպանության հետ առնչվող գործերից են Սողոմոն Թեհլերյանի (1923) և գորավար Անդրանիկի (1925) կավճաներկ դիմանկարները²²:

Տրապիզոնում ծնված Արշակ Ֆեթվաճյանի (1866–1947) ստեղծագործական կողմնորոշման համար կարևոր նշանակություն են ունեցել 1900-ականներին Հայաստան կատարած ուղևորությունները, որոնց ընթացքում նա ծանոթացել է հայրենի բնության, ինչպես նաև Անիի և հարակից շրջանների ճարտարապետական հուշարձաններին: Արդյունքում ստեղծվել են մի քանի տասնյակ ջրանկարներ և հարյուրավոր մատիտանկարներ, որոնք ոչ այնքան զեղարվեստա-

²¹ Նկարչի նշված գործերից բացի, հայտնի է նաև «Հայերի ջարդը» («Հայկական կոտորած», 1916) յուղանկարը, որը մեզ չի հասել:

²² Տե՛ս Մ. Կիրակոսյան. Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2014:

կան, որքան պատմամշակութային մեծ արժեք ունեն («Ս. Փրկչի եկեղեցին: Անի», 1901, «Տեկորի Ս. Երրորդություն եկեղեցին», 1906, «Հովհաննես Մկրտչի եկեղեցին: Անի», 1907 և այլն): Ինչպես նշում է նկարչին նվիրված մենագրության հեղինակ Լևոն Չուգասյանը, «...ժամանակի հոլովությի հետ բազմապատկվում է Ֆեթվաճյանի փաստանկարների արժեքը: Այդ երկերն անգին են ոչ միայն այն պատճառով, որ նրա պատկերած կոթողներից շատերն անցյալում լուսանկարված չեն եղել կամ գտնվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս, այլև որովհետև դրանց մեծ մասն այսօր արդեն գոյություն չունի...»²³:



Սիմոն Նահապետ (Նահապետյան).
Սասունցի հերոսուհին գահավիժում է
(անթվակիր)

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում նաև Ֆեթվաճյանի՝ հայրենասիրական զգացումներով, ռոմանտիկական ու հերոսական ոգով համակված «Սասունցի հայ կինը» («Մանուկ Հայաստան», 1903) ջրանկարը²⁴, որը վկայում է ոչ միայն հայ տղամարդկանց, այլև հայ կանանց ազգանվեր պայքարի ու անձնագոհության մասին: Իր կերպարային բովանդակությամբ և ընդհանուր պատկերագրությամբ Ֆեթվաճյանի այս ստեղծագործությունը հիշեցնում է նույն թվականին Վենետիկում հրատարակվող «Գեղունի» պատկերազարդ հայաթերթի համարներից մեկում վերատպված՝ իտալահայ լուսանկարիչ, գծանկարիչ ու փորագրիչ Միմոն Նահապետի (Նահապետյան, ծննդյան և մահվան տարեթվերն անհայտ են) «Սասունցի հերոսուհին գահավիժում է» անթվակիր ջրանկարը²⁵, որտեղ պատկերված տեսարանը վերաբերում է 1894-

ին Թուրքիայում սկսված հայոց ջարդերին: Ներկայացնելով և նկարագրելով այդ ստեղծագործությունը՝ Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամ, «Գեղունու» խմբագիր, անվանի բնագետ ու բանասեր Միմոն Երեմյանը գրում է.

²³ Արշակ Ֆեթվաճյան (աշխատասիրությամբ Լ. Չուգասյանի), Երևան, 2011, էջ 49 և 63:

²⁴ Վերատպությունը տե՛ս Հայկական հարց: Հանրագիտարան, Երևան, 1996, էջ 467 և Արշակ Ֆեթվաճյան, էջ 68:

²⁵ Վերատպությունը տե՛ս «Գեղունի» (Վենետիկ), 1903, - 1- 10, էջ 9: Հայաթերթի նույն համարից տեղեկանում ենք (էջ 5), որ Միմոն Նահապետի վերոհիշյալ՝ մեզ չհասած ջրանկարը ժամանակին «Գեղունու» խմբագրությանն է նվիրել Թավրիզի բնակիչ Մ. Խան Երեմյանը:

««Գեղունու» այս բաժնում զետեղում ենք նաև սասունցի դյուցազն կնոջ պատկերը, ուր տեսնում ենք հայկական պարկեշտության գերագույն հրապույրով տոգորված մի սրտաճմլիկ տեսարան. մաքրափայլ սասունցի մայրը քրդերի ամբարիշտ լլկանքներին չենթարկվելու համար իր մատաղ գառնուկի հետ սարերի գագաթից գահավիժում է անդունդների մեջ»²⁶:



Արշակ Ֆեթվաճյան. «Ձիթենի» գրական ժողովածուի շապկանկարը (1915)

Կրկին դառնալով Ա. Ֆեթվաճյանին՝ ավելացնենք, որ նա է հեղինակել 1915-ին Թիֆլիսում հրատարակված «Ձիթենի» գրական ժողովածուի շապկանկարը՝ ռազմի դաշտում ընկած հայ զինվորի մահը ողբացող կնոջ պատկերով, և ձևավորել մեկ տարի անց «Հայկամավորներ. 1914–1916» վերնագրով Թիֆլիսում լույս տեսած պատկերագրքի կազմը՝ հալածվող, հայրենագրկվող, սակայն չընկճվող ու զենքը ձեռքին պայքարի ելած հայ ժողովրդի հավաքական կերպարով:

Նույն շրջանում են ստեղծվել Եղիշե Թադևոսյանի (1870–1936) «Դեպի պանդխտություն» (1895) և «Լուսնյակ գիշեր. Բեյրութի ավերիկներ» (1915) կտավները, որտեղ մի դեպքում արվեստագետը ներկայացրել է հայկական գերեզմանոցում հարազատների շիրմներին հրաժեշտ տվող տարագիր հայերի՝ հոր և զավակի վշտահար կերպարները, իսկ մյուս դեպքում՝ անդրադարձել Մուսա լեռան հերոսամարտի պատմությանը՝ տպավորելով ֆրանսիական շոգենավի վրա փրկություն գտած, բայց խավար գիշերով հայրենիքից ստիպված հեռացող տարագիրներին:

Գերմանիայում և Ֆրանսիայում ապրած ու ստեղծագործած ծովանկարիչ Վարդան Մախոխյանի (1869–1937)՝ 1915-ից հետո կատարած աշխատանքներում («Ալեքսիություն», «Անհանգիստ ծովափ», «Սև ծով», 1921 և այլն) արտացոլվել է իր մտերիմներին կորցրած, հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի մասին անընդհատ մտորող նկարչի ծանր հոգեվիճակը: Ի դեպ, նույնպիսի զգացումներով է շաղախված Մախոխյանի՝ ջութակի և դաշնամուրի համար գրած «Հայաստանի ողբը» («La Plainte de l'Arménie») պիեսը, որն առաջին անգամ կա-

²⁶ Ս. Երեմյան. «Գեղունին» և հայ գեղարվեստը (խմբագրական). – «Գեղունի», 1903, - 1–10, էջ 5:

տարվել է 1919 թ. հունվարի 13-ին Մոնտե Կառլոյում, ապա հնչել Մոնակոյում և Նիսում²⁷:

Եղեռնի թեման գեղարվեստական ուրույն արտահայտություն է գտել Նոր Նախիջևանում ու Դոնի Ռոստոմում ապրած նկարիչներ Հմայակ Արծաթայանյանի (1876–1920) և Ակիմ Ավանեսովի (Ավագ Հովհաննիսյան, 1883–1966) գործերում:



Հմայակ Արծաթայանյան. Թուրքերի գազանությունը (1919)

1915-ին Արծաթայանյանը եկել է Հայաստան, տեսել մահից խուսափած գաղթականներին, լսել նրանց ահասարսուռ պատմությունները: Հուզմունալից տրամադրությամբ և խռովահույզ զգացմունքներով են թաթախված «Մայրերի ողբը», «Հայկական գյուղի հրդեհումը» (1915), «Արցունքների հովիտ» (1917), «Հայրենի փլատակներ» (1917), «Սարսափների աշխարհում» (1917), «Կոտորած» (1918), «Թուրքերի գազանությունը» (1919) յուղաներկ կտավներն ու ջրանկարները:

Մի քանի տարի առաջ Դոնի Ռոստոմում հայտնաբերվեց Ա. Ավանեսովի 1915 թ. ավարտած, Մեծ եղեռնին արձագանքող առաջին գործերից մեկը՝ «Դարից դար» բազմաֆիգուր խոշոր կտավը, որտեղ էքսպրեսիվ խեղված ձևերով և Միքելանջելոյի «Ահեղ դատաստանի» ազդեցության տակ հայ արվեստագետն իր բողոքի ձայնն է բարձրացրել հարագատ ժողովրդի նկատմամբ թուրքերի գործած հանցանքների դեմ: Ժամանակի ընթացքում շրջանակից հանված, գլանված ու մոռացության տրված այդ անխնամ նկարը ներկաշերտի լուրջ վնասվածքներ է ստացել: Այժմ այն վերականգնվում է Հայաստանի ազգային պատկերասրահի մասնագետների կողմից և շուտով կներկայացվի Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված ցուցահանդեսում, որից հետո կրկին կվերադառնա Դոնի Ռոստոմ, ուր մշտական հանգրվան կգտնի Հայ-ռուսական բարեկամության թանգարանում: Ա. Ավանեսովի ստեղծագործություններից է նաև Դոնի Ռոստոմի արվեստի թանգարանին պատկանող «Մայրը» («Սարսափ», 1917) զգայացունց յուղանկարը:

²⁷ Տե՛ս Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Ծոփանկարիչ Վարդան Մախոխյան, Երևան, 2004, էջ 54 և Վարդան Մախոխյան (կազմող և առաջաբանի հեղինակ Արա Հակոբյան), Երևան, 2006, էջ 13:



Ակիմ Ավանեսով (Ավագ Գովհաննիսյան). Մայրը (Սարսափ) (1917)



Սարգիս Խաչատուրյան. Հայ որբերն անապատում (1920)

Էջմիածնում ապաստանած հայ գաղթականներին պատկերող բազմաթիվ աշխատանքների հեղինակ է Սարգիս Խաչատուրյանը

յանը (1886–1947): Եղերական օրերին մորն ու եղբորը կորցրած նկարչի համար բախտորոշ էր 1915 թվականը: Մյունխենից Կ. Պոլիս ժամանած և Կարնո Մանասարյան վարժարանում նկարչություն դասավանդելու հույսը փայփայող արվեստագետը զորակոչվելու, Առաջին աշխարհամարտի զոհը դառնալու վտանգից ու Մեծ եղեռնից մի կերպ խույս տալով՝ մեկնում է Թիֆլիս, որտեղ ստեղծում է հայ գաղթականներին նվիրված պատկերաշարքը, որը ներկայացնում է 1915-ին Թիֆլիսում բացված իր անհատական ցուցահանդեսում, ապա 1917–1921 թթ. Թիֆլիսում, Երևանում և Կ. Պոլսում կազմակերպված հայ արվեստագետների նորաստեղծ միության ցուցահանդեսներում: Փախստականների ծանր վիճակը, դժվարություններով լի կյանքն ու կենցաղը նա պատկերել է «Հուսահատները», «Տանջանք», «Ծարավ», «Կյանքի պայքարը», «Որբեր», «Գաղթական ամուսիններ», «Գաղթականներ» (1915), «Գաղթական կինը երեխաներով» (1916), «Հայ որբերն անապատում» (1920), «Որբացած երեխաներ» (1921) և համանման այլ նկարներում: Նույն տարիներին է ստեղծվել Խաչատուրյանի ամենացնցող գործերից մեկը՝ «Տեր-Ջոր» կտավը, որտեղ երկնքի արնագույն ֆոնին պատկերված է թուրք յաթաղանի սպառնալիքի տակ ստիպված կաքավող մի մերկ հայուհի²⁸: Այդ աշխատանքները դիտելուց հետո նկարչին բնութագրել են որպես «հայ վշտի երգիչ», իսկ Հովհաննես Թումանյանը բացականչել է. «Սարգիս ջան, ինչ որ դու տվեցիր քո վրձինով, մենք չենք կարող տալ մեր գրչով: Քո գործերը ամենալավ միջոցն են մեր տանջանքների ահավոր պատմության հետ օտարներին ծանոթացնելու համար»²⁹:

²⁸ «Տեր-Ջոր» կտավի ճակատագիրը, ցավոք, անհայտ է:

²⁹ Տե՛ս Սիյուրքահայ արվեստի հարցեր (Արտասահմանյան մամուլի էջերից). – Հայագիտությունը արտասահմանում, Գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, Գ մատենաշար, Երևան, 1977, - 1 (22), էջ 4:

Համիդյան ջարդերի և Հայոց ցեղասպանության թեմաներով առանձին կտավներ են վրձնել Հարություն Շամշինյանը (1856–1914), Սարգիս Երկանյանը (1870–1950), Լևոն Քյուրքյանը (1872–1924), Արամ Բակայյանը (1878–1959), Հրանտ Այանաքը (Այանաքյան, 1880–1938) և ուրիշներ:



Մելքոն Քեպապայան. Հայ անթաղ նահատակների հիշատակարան (անթվակիր)

Նույն շրջանում ստեղծված գրաֆիկական աշխատանքներից ուշադրության են արժանի Երվանդ Դեմիրճյանի (1870–1938) «Հայերի գաղթը» ջրաներկ շարքը, Էդգար Շահինի (Շահինյան, 1874–1947) «Հայ որբեր» օֆորտը (1910), Մելքոն Քեպապայանի (1880–1949) գուաշները, մասնավորապես՝ «Գաղթականները», «Հայի արյան ճամփան» (1915), «Հայ մայրերի սուգը» (անթվակիր) և «Հայ անթաղ նահատակների հիշատակարանը» (անթվակիր) խորհրդանշական ու վերացական փոքրաչափ պատկերները:

Հին Թիֆլիսի «կենցաղագիր» Վանո Խոջաբեկյանի (1875–1922) ստեղծագործական ժառանգության մեջ տեղ են գտել 1918-ին Երևանում կատարված զժանկարները՝ «Գաղթականները կայարանում», «Գաղթականները ճաշի հերթի մեջ», «Որբերը Երևանի դպրոցի բակում»

և այլն:

1915–1917 թթ. Թիֆլիսում ստեղծվել են Միքայել Խունունցի (1883–1931)՝ թուրք իշխանավորներին խարազանող և վանեցի փախստականներին ներկայացնող գրաֆիկական թերթերը:

Թիֆլիսում, Բաքվում, Սանկտ Պետերբուրգում, Աթենքում, Լոնդոնում, Կահիրեում և այլուր այդ տարիներին հրատարակված հայ երգիծական հանդեսների ու զավեշտաթերթերի («Աննամուս», «Ապտակ», «Ավել», «Զուռնա», «Խաթաբալա», «Մոծակ», «Մա-դա-նա», «Մափրիչ» և այլն) էջերում տեսնում ենք Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաշատ վայրերում տեղի ունեցած բռնությունները դատապարտող պատկերներ, որոնց հեղինակներն են հնչակյան կուսակցության գործիչ, Տրապիզոնում ծնված և այնտեղ 1915-ի գարնանը զոհված Պետրոս Մարիմյանը (1868–1915), գրող Վահրամ

Ալազանի ավազ եղբայր, Վանի հերոսամարտի մասնակից, 1915-ին Երևան գաղթած Դանչոն (Եղիազար Գաբուզյան, 1894–1937), արևելահայ և արևմտահայ նկարիչներ Ալեքսանդր Միրզոյանը (1868–1928), Ստեփան Ակայանը (1870–1937), Վրթանես Ախիկյանը (1873–1936), Դավիթ Օբրոյանը (1874–1943), Գարե



Դ. Ի. Արխիպով. Հայերի կոտորածը Թուրքիայում (1915–1917 թթ.)

գին Երիցյանը (1879–1966), Վահրամ Մանավյանը (1883–1952), Գրիգոր Մխիթարյանը (1883–1950), ճարտարապետ Ֆիլիպ Արփիարյանը (1885–1956) և ուրիշներ: Մի քանիխոսք Թիֆլիսում ապրած ու ստեղծագործած այլազգի նկարիչների՝ ինդրո առարկա թեմայով գործերի մասին: Օսմանյան կայսրության մեջ հայերի անմխիթար վիճակին հաճախ են անդրադարձել «Խաթաբալա» երգիծական պատկերազարդ շաբաթաթերթի մշտական աշխատակիցներ Գենրիխ Գրինսակին, Իոսիֆ Ռոտտերը և Օսկար Շմեռլինգը³⁰: Ու քանի որ խոսվեց

³⁰ Գերմանիայում ծնված, Մյունխենի գեղարվեստի ակադեմիան ավարտած Իոսիֆ Ռոտտերը եղել է նաև Թիֆլիսում Ստեփան Լիսիցյանի խմբագրած «Հասկեր» մանկական հանդեսի նկարիչներից: «Խաթաբալա» շաբաթաթերթում և, առհասարակ, Կովկասի հայկական մամուլում Բ. Ռոտտերի և Օ. Շմեռլինգի գեղեղամ ծաղրանկարների մասին առանձին խոսվում է ֆրանսահայ պատմաբան Կլեր (Սեդա) Մուրադյանի հոդվածներից մեկում (տե՛ս С. Mouradian. Caricature in the Armenian Press of the Caucasus. – “Armenian Review”, Winter 1991, Cambridge, vol. 44, Number 4/176, pp. 14 – 22).

տվյալ ժամանակաշրջանում հայկական մամուլում տպագրված՝ մեզ հետաքրքրող թեմայով այլազգի հաստուկենտ արվեստագետների ստեղծագործությունների մասին, չենք կարող շրջանցել մասնագետների ուշադրությունից վրիպած, իր տեսակի մեջ եզակի մի գործ՝ կովկասյան բանակի ռուս զինվոր, բաքվեցի ինքնուս նկարիչ Դ. Բ. Արխիպովի «Հայերի կոտորածը Թուրքիայում» գունանկարը, որի սև-սպիտակ վերատպությունը 1917 թվականի իր համարներից մեկում ընթերցողներին է մատուցել *«Армянский вестник»* շաբաթահանդեսը³¹: Գեղարվեստական բարձր արժանիքներից զուրկ, սակայն փաստավավերագրական մեծարժեք այս նկարը հայերի հանդեպ թուրքերի գազանությունները սեփական աչքերով տեսած օտարի, անաչառ մարդու վկայություն է:

Նույն շրջանի հայ քանդակագործության մեջ համիդյան ջարդերի ու ցեղասպանության թեմաները գրեթե չեն արծարծվել: Բացառություն են կազմում, թերևս, միայն Հակոբ Փափազյանի (1878–1957) և Հակոբ Գյուրջյանի (1881–1948) աշխատանքներից մի քանիսը:

1908 թ. Ջմյունիայում հաստատված Փափազյանը բազմաթիվ դիմաքանդակներ, թեմատիկ քանդակներ ու դամբարանային հուշարձաններ է կերտել: Առաջին աշխարհամարտի ժամանակ պատվերներից զրկվելով՝ նա նյութական ծանր կացության մեջ է հայտնվել ու հոգեբանական ճգնաժամ ապրել: 1920-ին քանդակագործին այցելած Հակոբ Սիրունին նրան գտել է «իր կիսավեր աշխատանոցի մեջ՝ ընկճված, հուսահատ ու հոռետես..., մենակ, մեն-մենակ, լքված ու բոլորից անտեսված»³²: Դրանից երկու տարի անց՝ 1922-ին, հայերի հերթական կոտորածներից հազիվ փրկված արվեստագետը Ջմյունիայում է թողել իր ստեղծագործություններից շատերն ու անվերադարձ մեկնել Նյու Յորք:

Հայկական ջարդերի թեմաներով Գյուրջյանի աշխատանքներից են «Գաղթական հայուհին երեխայի հետ» (1910) հարթաքանդակը և «Փախչող հայուհին երեխաներով» («Փախուստ», 1912) փոքրաչափ քանդակախումբը: Գյուրջյանի հաջողված գործերից է նաև զորավար Անդրանիկի դիմաքանդակը (1916), որը չի պահպանվել:

Եղեռնը վերապրած սփյուռքահայ վարպետներից այդ թեմային անդրադարձել են աշխարհի տարբեր երկրներում մասնագիտական կրթություն ստացած, ապրած և ստեղծագործած տաղանդավոր նկարիչներ ու քանդակագործներ Օնիկ Ավետիսյանը (1898–1974), Արմիսը (Արմենակ Միսիրյան, 1901–1977), Ժիրայր Օրագյանը (1901–1962), Բյուզանդ Թոփայանը (1902–1970), Արշիլ Գորկին (Ոստանիկ Ադոյան, 1904–1948), Աշոտ Ջորջյանը (1905–1970), Պետրոս Կոնտու-

³¹ Տե՛ս «Армянский вестник», 1917, 1 21, с. 8.

³² Տե՛ս Մ ի ր ո ն ի ի [Հ ա կ ո ր Ջ ո լ ո լ յ ա ն]. Հակոբ Փափազյան (մի էջ հուշատետրիցս). – «Նավասարդ», Բուխարեստ, 1924, նոր շրջան, Ա հատոր, Ժ-ԺԲ պրակ, էջ 358 [70]:

րաջյանը (1905–1956), Լևոն Թութունջյանը (1906–1968), Գառգուն (Գառնիկ Զուլումյան, 1907–2000), Զարեհ Մուրաֆյանը (1907–1980), Խորեն Տեր-Հարությունը (Տեր-Հարությունյան, 1909–1991), հաջորդ սերնդի անվանի արվեստագետներ ժանսեմը (Հովհաննես Մեմերջյան, 1920–2013), Ռիչար Ժերանյանը (ծն. 1921), Քաջազը (Քաջագունի Քեչեճյան, 1924–2004), Պոլ Կիրակոսյանը (1926–1993), Շարթը (Սարգիս Հարությունյան, ծն. 1927) և ուրիշներ:

Ինչ վերաբերում է խորհրդահայ կերպարվեստին, ապա ստալինյան գրաքննության, գաղափարական և քաղաքական խիստ հսկողության պայմաններում Հայոց ցեղասպանության թեման լրության մատնվեց: Եզակի բացառություններ են Էդվարդ Բաբեկյանի (1914–2007) «Արևմտյան Հայաստանում» (1940) և «Առևանգում» (1941) յուղաներկ կտավները: Միայն խրուշչովյան «հալոցքից» սկսած, հատկապես 1965 թվականի գարնանը, Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի օրերին Երևանում տեղի ունեցած բազմամարդ ցույցերից հետո ցեղասպանության արգելված թեման, վերջապես, արտոնվեց և աստիճանաբար տարածում գտավ խորհրդահայ կերպարվեստում:

Այդ ուղղությամբ առաջին քայլերից էր Սարգիս Մուրադյանի (1927–2007) «Կոմիտաս: Վերջին գիշերը» (1956) հայտնի նկարը: Հետագայում հայ ժողովրդի մեծագույն ողբերգությանն են անդրադարձել գեղարվեստական տարբեր սկզբունքներ դասանող, ստեղծագործական տարբեր դիրքերում կանգնած նկարիչներ Միմոն Գալստյանը (1914–2000), Հրայր Ռուխկյանը (1915–1992), Հովհաննես Զարդարյանը (1918–1992), Սուրեն Պիպոյանը (1922–2005), Մկրտիչ Սեդրակյանը (1922–2009), Հակոբ Հակոբյանը (1923–2013), Սուրեն Սաֆարյանը (1923–1988), Վալենտին Պողոսովը (Տեր-Աստվածատրյան, 1924–1998), Գրիգոր Խանջյանը (1926–2000), Մինաս Ավետիսյանը (1928–1975), Ռուբեն Աղայանը (ծն. 1929), Էդվարդ Արծրունյանը (1929–2010), Զուլում Գրիգորյանը (ծն. 1932), Գայանե Խաչատրյանը (1942–2009), քանդակագործներ՝ Կոմիտասին նվիրված մի շարք հուշարձաններ ու հաստոցային քանդակներ կերտած Արա Հարությունյանը (1928–1999), Արտո (Հարություն) Չաքմաքչյանը (ծն. 1933), Լևոն Թոքմաջյանը (ծն. 1937), Դավիթ Երևանցին (Դավիթ Բաբայան, ծն. 1940), Հայոց ցեղասպանության նահատակներին, թուրքերի դեմ մղված ազգային-ազատագրական պայքարի զոհերին ու հերոսներին առավել հաճախ կերպարված Վան Խաչատուրը (Վանիկ Խաչատրյան, ծն. 1926), Արտաշես Հովսեփյանը (ծն. 1931), Բենիկ Պետրոսյանը (1939–1996), Հովհաննես Մուրադյանը (1940–2005), Արա Շիրազը (Արամազդ Կարապետյան, 1941–2014), Յուրի Պետրոսյանը (ծն. 1941), Գետիկ Բաղդասարյանը (ծն. 1949) և ուրիշներ: Այդ թեմաներն ու կերպարները շարունակում են հուզել արդեն անկախության շրջանում ձևավորված ու դեռ նոր ասպարեզ մտած երիտասարդ արվեստագետներին և, ան-

շուշտ, հետաքրքրելու ու ներշնչելու են նաև գալիք սերունդների նկարիչներին ու քանդակագործներին, քանի որ ընդմիջտ տպավորվել են հայ ժողովրդի պատմական հիշողության, նրա կոլեկտիվ գիտակցության մեջ:

ОТРАЖЕНИЕ ГАМИДОВСКИХ ПОГРОМОВ И ГЕНОЦИДА
В АРМЯНСКОМ ИЗОБРАЗИТЕЛЬНОМ ИСКУССТВЕ
(1894–1923 гг.)

ԱՐԱՐԱՏ ԱԳԱՏՅԱՆ

Р е з ю м е

В конце XIX и на протяжении двух первых десятилетий XX века армянский народ пережил великую трагедию и понес огромные потери. За массовыми гамидовскими погромами 1894–1896 годов последовало заранее спланированное и хладнокровно осуществленное младотурками, чудовищное по своей жестокости и беспрецедентное по масштабам физическое истребление армян – первый в мировой истории акт геноцида. Эти кровавые события глубоко потрясли современников и нашли отражение не только в официальных документах, на страницах печати, в фотографиях и кинокадрах, в воспоминаниях и рассказах выживших чудом людей, в художественной литературе тех лет, но также в произведениях изобразительного искусства, созданных такими выдающимися мастерами армянской живописи, графики и скульптуры, как Иван (Ованес) Айвазовский, Геворк Башинджагян, Вардгес Суренянц, Фанос Терлемезян, Аршак Фетваджян, Егише Тадевосян, Амаяк Арцатпанян, Саркис Хачатурян, Эдгар Шаин (Шагинян), Акоп Гюрджян и другие.

THE HAMIDIAN POGROMS AND THE GENOCIDE
AS REFLECTED IN ARMENIAN FINE ARTS
(1894 – 1923)

ԱՐԱՐԱՏ ԱԳԿԱՏՅԱՆ

S u m m a r y

At the end of the 19th century and through the first two decades of the 20th century, the Armenian people suffered a tremendous tragedy, sustained heavy losses. The Hamidian mass

pogroms of 1894–1896 were followed by afore devised and cold-heartedly perpetrated physical extirpation of Armenians by the Young Turks; it was the first in the history act of genocide, horrendous by its brutality and unprecedented by its scope. These bloody events shocked the contemporaries and were reflected not only in the official documents, in the press, in photographs and film images, in fiction, in the stories and remembrances of those who had survived by a mere miracle, but also in fine arts, in the works of such outstanding masters of Armenian painting, graphics and sculpture as Ivan (Hovhannes) Aivazovsky, Gevorg Bashinjaghyan, Vardges Surenyants, Panos Terlemezyan, Arshak Fetvajyan, Yeghishe Tadevosyan, Hamayak Artzatpanyan, Sargis Khachaturyan, Edgar Shahin (Shahinyan), Hakob Gyurjyan and others.